

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՄԱՐԶԻ ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆ

17.05.2014 թ.

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն այցելել է Հայ Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդարան:

Կոտայքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Առաքել արքեպիսկոպոս Քարամյանի օրհնությունը ստանալուց հետո Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն ու թեմակալ առաջնորդը քննարկել են մարզի հոգևոր և աշխարհիկ գործընթացների կազմակերպմանը, ինչպես նաև քրիստոնեական դաստիարակության ուղղությամբ տարվելիք աշխատանքների իրականացմանը վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Հայ Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդ Տեր Առաքել արքեպիսկոպոս Քարամյանը ներկայացրել է մարզի համայնքներում առկա Եկեղեցիներիին, ինչպես նաև տեղերում իրականացվող հոգևոր գործունեությանը վերաբերող մանրամասներ:

Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն իր շնորհակալական խոսքում հայտնել է սերտ և արդյունավետ համագործակցությունն ու ընդգծել, որ նմանատիպ համագործակցության պարագայում հնարավոր կդառնա ձեռնարկել ու իրականացնել բազմաթիվ նշանակալի ծրագրեր՝ նպաստելով ինչպես թեմական, այնպես էլ մարզային ամենատարբեր գործընթացներին: